ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից 1996 թ. դեկտեմբերի 10-ին պաշտոնական այցելությամբ մեկնեց Հռոմ, Նորին Սրբազնություն Հովհաննես-Պողոս Բ Պապի հրավերով՝ եղբայրական սիրո ողջագուրմամբ լինելով հյուրը Սրբազան Քահանայապետի դեկտեմբերի 10-13-ը, Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց Սրբազան Պատրիարքների և թեմական առաջնորդ ինը եպիսկոպոսների և արքեպիսկոպոսների հետ:

Պատմական այս այցելությունը, որով նոր էջ բացվեց երկու Եկեղեցիների հարաբերությունների պատմության մեջ, տեղի ունեցավ փառաշուք հանդիսավորությամբ ու եղբայրական փոխըմբռնմամբ, հավարտ որի Նորին Սրբազնություն Հովհաննես-Պողոս Բ Պապը և Ամենայն Հայոց Հայրապետը ստորագրեցին համատեղ հայտարարություն՝ ի խնդիր Եկեղեցիների միջև սիրո և միության ամրապնդման ու գործակցության, որում երկու Վեհապետերի մասնավոր հոգածությունն է արտահայտվում հայ ժողովրդի հանդեպ և արժևորվում նրա անցած 1700-ամյա Քրիստոսադրոշմ ճանապարհը:

Այնուհետև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը պաշտոնական հանդիպում ունեցավ Իտալիայի Հանրապետության նախագահի հետ, հովվապետական ուղևորությամբ եղավ իտալահայ համայնքում:

Ապա Գարեգին Ա Վեհափառը այցելություն տվեց Վենետիկի Մխիթարյան Միաբանությանը ի Ս. Ղազար՝ հրավերով միաբանության ընդհանուր Աթոռակալ Հայր Հովսեփ վարդապետ Բեհեսնիլյանի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը իր շքախմբով վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին 1996 թ. դեկտեմբերի 20-ին: